ԲԱԺԻՆ 5. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՃՅՈՒՂԵՐ
РАЗДЕЛ 5: НАУЧНЫЕ ОТРАСЛИ ПЕДАГОГИКИ
SECTION 5: SCIENTIFIC BRANCHES OF PEDAGOGY

DOI: 10.46991/educ-21st-century.v4.i2.188 **https://orcid.org/0000-0003-0231-2844**

ВАЖНОСТЬ СПЕЦИАЛЬНОСТИ «СОЦИАЛЬНЫЙ ПЕДАГОГ» В СФЕРЕ ОБЩЕГО ОБРАЗОВАНИЯ

Казарян Аревик
Канд.пед.наук., доцент
Ереванский государственный университет, Армения
arev.ghazaryan@ysu.am

Аннотация

Ключевые слова: социальный педагог, функции социального педагога, помощник учителя, сферы деятельности социального педагога.

Цель исследования:–доказать важность специальности «социальный педагог» в сфере общего образования.

Новизна исследования. Методом сопоставления рассмотрены профессиональная деятельность и функции классных руководителей, помощников учителя, социальных педагогов и обосновано, что в общеобразовательной школе более целесообразно вместо классных руководителей и помощников учителя применить профессиональную деятельность института «социального педагога».

В статье рассмотрена важность специальности «социальный педагог» в сфере общего образования. Обосновывается, что не всегда целесообразно использовать деятельность классных руководителей и помощников учителя в общеобразовательной школе, т.к. в некоторых случаях она пересекается с функциями социального педагога. Возникает необходимость в рассмотрении совместных функций классных руководителей, социальных педагогов и помощников учителя и пересмотре выделяемых в школе штатов. Если учесть, что получение специальности «социальный педагог» обусловлено наличием соответствующей образовательной программы и спросом на рынке труда, а для вышеперечисленных штатов не предполагается обучение особых специалистов, то целесообразно пересмотреть выделяемые штаты, институт классных руководителей заменить на институт «социального педагога», расширить их функции и при обязательном штатов психологов в общеобразовательных школах сформировать команду сотрудничества, способную решить проблемы, возникающие в процессе социализации учащихся.

THE IMPORTANCE OF THE PROFESSION SOCIAL PEDAGOGUE IN THE FIELD OF PUBLIC EDUCATION

Ghazaryan Arevik
Ph.D., Associate Prof.
Yerevan State University, Armenia
arev.ghazaryan@ysu.am

Summary

Keywords: social pedagogue, social pedagogue functions, teacher's assistant, social pedagogue activity spheres.

The purpose of the research: The purpose of the research is to study the importance of the "social pedagogue" profession in the field of public education.

The novelty of the research: the professional functions of class teachers, teacher assistants, and social pedagogues were researched and compared. The social pedagogue was found to be most important to general education.

The article examines the importance of the profession of "social pedagogue" in the field of public education.

It is justified that the activity of class leaders and teacher's assistants is not always appropriate in the general education school and in some cases causes a conflict with the functions of the social pedagogue.

It is necessary to jointly discuss the functions of class teachers, social pedagogue and teacher's assistants and review the assigned positions.

If we keep in mind that the acquisition of the profession of "social pedagogue" is conditioned by the availability of an appropriate educational program and the demand of the labor market, while a special training is not implied for the positions listed above, then it is advisable to review the assigned positions, replace the class teacher institute with "social pedagogue" institute, to expand their functions with the presence of mandatory positions of psychologists in public schools, to form a cooperative team that will be able to solve the problems arising during the socialization of students.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ղազարյան Արևիկ
մանկ. գիտ. թեկն., դոցենտ
Երևանի պետական համալսարան, Հայաստան
arev.ghazaryan@ysu.am

Հանմառոտ ներածական: Հիմնավորվում է, որ դասղեկների, ուսուցչի օգնականների գործունեությունը միշտ չէ, որ նպատակահարմար է հանրակրթական դպրոցում. որոշ դեպքերում հատում է առաջացնում սոցիալական մանկավարժի գործառույթների հետ: Անհրաժեշտ է համատեղ քննարկել դասղեկի, սոցիալական մանկավարժի ու ուսուցչի օգնականի գործառույթները և վերանայել հատկացվող հաստիքները: Եթե նկատի ունենանք, որ սոցիալական մանկավարժի մասնագիտության ձեռքբերումը պայմանավորված է համապատասխան կրթական ծրագրի առկայությամբ ու աշխատա-շուկայի պահանջարկով, իսկ վերը թվարկված հաստիքների համար հատուկ մասնագետների ուսումառություն չի ենթադրում, ապա նպատակահարմար է վերանայել հատկացվող հաստիքները, դասղեկական ինստիտուտը փոխարինել սոցիալական մանկավարժի ինստիտուտով՝ ընդլայնելով նրանց գործառույթներն ու հոգեբանների պարտադիր հաստիքների առկայությամբ հանրակրթական դպրոցներում ձևավորել համագործակցային թիմ, որը կկարողանա լուծել սովորողների սոցիալականացման ընթացքում առաջացող խնդիրները:

Բանալի բառեր: Սոցիալական մանկավարժ, սոցիալական մանկավարժի գործառույթներ, ուսուցչի օգնական, սոցիալական մանկավարժի գործունեության ոլորտները:

Հիմնախնդիրը: Հանրակրթական դպրոցում երեք՝ դասղեկի, սոցիալական մանկավարժի, ուսուցչի օգնականի հաստիքների առկայությունը նպատակահարմար չէ, հատկապես, որ նրանց պաշտոնային նկարագրում տեղ գտած որոշ դրույթներ ունեն հատումներ, և հարց է առաջանում՝ ում է վերապահվում լուծելու գործունեության ընթացքում առաջացող խնդիրները:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտություններ: Հիմնախնդրին առնչվող մտքեր, տեսակետներ են արտահայտել Ա. Վ. Մուդրիկը, Մ. Ա. Գալագուզովան, Գ. Ն. Շտինովան, Վ. Դ. Սեմյոնովը, Լ. Բ. Մարդախաևան, Յու. Բ. Վասիլկովան, Տ. Ա. Վասիլկովան, Ֆ. Ա. Մուստաևան, Ն. Հարությունյանը, Ա. Ղազարյանը, Լ. Ղուկասյանը և ուրիշներ:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծության ու համադրության, դիտման, զրույցի մեթոդները:

Հետազոտության շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել սոցիալական մանկավարժի մասնագիտության կարևորությունը հանրակրթական ոլորտում և հիմնավորել, որ ուսուցչի օգնականի գործառույթներից շատերը կատարում է սոցիալական մանկավարժը, հետևաբար ինքնանպատակ է այդ հաստիքների առկայությունը դպրոցում:

Հետազոտության նորույթը: Համադրելով ուսումնասիրվել են դասղեկների, ուսուցչի օգնականների, սոցիալական մանկավարժների մասնագիտական գործունեությունը, գործառույթները, և հիմնավորվել է, որ հանրակրթական դպրոցներում անհրաժեշտ է հստակեցնել դասղեկների, ուսուցչի օգնականների, սոցիալական մանկավարժի ինստիտուտի մասնագիտական գործունեությունը, նրանց գործառույթները:

Տեսական նշանակությունն այն է, որ ուսումնասիրվել և վերլուծվել են սոցիալական մանկավարժի, դասղեկի ու ուսուցչի օգնականի պաշտոնային պարտականություններն ու որակավորման պահանջները, քննարկվել են այն դրույթները, որոնք համանման են:

Գործնական նշանակությունը: Հիմնախնդրի վերլուծությունն ու առաջարկությունները կարող են հետաքրքրել այն մասնագետներին, որոնք համակարծիք չեն, որ դպրոցում գրեթե նույն գործունեության համար անհրաժեշտ է նման հաստիքների բաշխում:

Հիմնական նյութի շարադրանքը: Արտասահմանյան առաջավոր փորձի հիման վրա մեզանում նույնպես ձևավորվեց սոցիալական մանկավարժություն գիտաճյուղը, որի հիման վրա բուհերում (Երևանի պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան) մշակվեցին կրթական ծրագրեր, ու աշխատաշուկայում առաջարկվեց պահանջարկ ունեցող մասնագիտություն՝ սոցիալական մանկավարժություն։ Թվում էր, թե բոլոր անհրաժեշտ նախադրյալներն առկա են՝ 1. բուհերում որակյալ կրթական ծրագրեր, 2. 2004 թ. ՀՀ հանրակրթության պետական կրթակարգում ամրագրված համապատասխան կետ, որի համաձայն՝ հանրակրթական բոլոր դպրոցները պետք է ունենան սոցիալական մանկավարժի հաստիքներ, 3. հասարակության լայն շրջանում աստիճանաբար նոր մասնագիտության կարևորության ընկալումը, 4. սոցիալական մանկավարժի պաշտոնային նկարագիրը, սակայն պրակտիկ աշխատանքի ընթացքում դասղեկների ու ուսուցչի օգնականների գործունեության, գործառույթների հատումները սոցիալական մանկավարժի գործառույթների հետ խառնաշփոթ են առաջացնում։ Դասղեկական ինստիտուտի առկայությունը հանրակրթական դպրոցներում նորություն չէ, սակայն եթե մենք փորձենք իրատեսորեն վերլուծել նրանց գործունեությունը, կնկատենք, որ կան բազմաթիվ խնդիրներ, որոնք խոցելի են դարձնում նրանց գործունեությունը։ Դասարանի դասղեկի գործառույթների բազմազանությունը կարելի է դասակարգել ըստ 4 հիմնական կառուցվածքային բաղադրիչների։ Դրանք են՝

1. կազմակերպչական-համակարգող,
2. հաղորդակցական,
3. կանխատեսման,
4. վերահսկողական [3]:

Եթե մենք համեմատական ընթացքով դիտարկենք սոցիալական մանկավարժի պաշտոնային պարտականություններն ու դասղեկի գործառույթները, ապա տեսանելի կլինեն գործառույթների նմանությունն ու ընդհանրությունները։ Դիտարկենք օրինակներ։

1. Կազմակերպչական-համակարգող գործառույթը համանման է սոցիալական մանկավարժի՝ 2010 թ. հոկտեմբերի 14-ին (N 1391-Ն) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ [2] սահմանված պաշտոնային պարտականությունների 1-ին, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 10-րդ, 15-րդ կետերին,

2. հաղորդակցական գործառույթը՝ 2-րդ, 3-րդ, 11-րդ, 12-րդ կետերին**,**

3. կանխատեսման գործառույթը՝ 4.2-րդ, 6-րդ, 7-րդ կետերին,

4. վերահսկողական գործառույթը՝ 10-րդ, 12-րդ, 15-րդ կետերին։ Սակայն չէ՞ որ սոցիալական մանկավարժի մասնագիտությանը ներկայացվող որակավորման պահանջներին համապատասխան՝ հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն (սոցիալական մանկավարժություն, սոցիալական աշխատանք՝ մասնագիտություններ որակավորմամբ) [նույն տեղում], նա կրթական ծրագրում ծանոթանում է նորագույն մանկավարժական գիտաճյուղերին՝ մանկավարժական մարդաբանություն, մանկավարժական աքմեոլոգիա, մանկավարժական վալելոգիա, մանկավարժական աքսիոլոգիա, մանկավարժական ինովատիկա, դպրոցի կառավարում, երջանկության մանկավարժություն, մասնագիտական պրակտիկա տարբեր ոլորտներում, ձեռք բերում խորը գիտելիքներ, որոնք նրան հնարավորություն են տալիս առավել արդյունավետ իրականացնելու մասնագիտական գործունեությունը։

Սոցիալական մանկավարժի գործունեության նպատակը երեխաների արդյունավետ սոցիալականացման ու սոցիալական հարմարման համար անվտանգ պայմանների ստեղծումն է, երեխայի պահանջմունքների բավարարմամբ սոցիալական, իրավական, հոգեբանական, բժշկական, սոցիալ-մանկավարժական մեխանիզմներով կանխարգելել ու հաղթահարել բացասական երևույթները երեխայի կյանքում, նրա ընտանիքում, դպրոցում, նրա ընկերական շրջապատում։

Սոցիալական մանկավարժի գործունեության մասնագիտական խնդիրն է օգնել սոցիալականացման ու հասարակություն ինտեգրվելու գործընթացում աջակցության կարիք ունեցող երեխաներին [1, 6]:

Սոցիալական մանկավարժի մասնագիտական գործունեության ընթացքում սոցիալական մանկավարժն իրականացնում է սոցիալ-մանկավարժական գործունեության հետևյալ տեսակները.

- սոցիալ-մանկավարժական ախտորոշում ու խորհրդատվություն,
- սոցիալ-կանխարգելիչ աշխատանքներ,
- շտկողական-վերականգնողական աշխատանքներ, սոցիալական դաստիարակություն [4, 164]:

Նման բազմընդգրկուն գործունեությունը հնարավորություն է տալիս սոցիալական մանկավարժին լիարժեք կատարելու իր աշխատանքը, ուստի հարց է առաջանում՝ ի՞նչ նպատակ ուներ գրեթե նույն գործառույթներով ձևավորել նոր սոցիալական ինստիտուտ ու նոր հաստիք՝ ուսուցչի օգնական: Հայաստանում սկսվել է ուսուցչի օգնականի հաստիքներ ստեղծելու գործընթաց: Հանրակրթական դպրոցներում սովորող յուրաքանչյուր 100-150 երեխայի հաշվով նախատեսվում է ունենալ ուսուցչի մեկ օգնական: Այսինքն՝ ստացվում է, որ նա կաշխատի միաժամանակ 3-5 դասարաններում՝ այդտեղ դասավանդող բոլոր ուսուցիչների հետ համագործակցելով: Ուսուցչի օգնականին ներկայացվող որակավորման պահանջներն են. «ուսուցչի օգնականի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մանկավարժական կրթություն կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ» (2010 թ. 14 հոկտեմբերի, N 1391-Ն): Ստացվում է, որ ուսուցչի օգնականին ներկայացվող որակավորման պահանջներն այլ են, սակայն պաշտոնային նկարագիրը՝ գրեթե նույնը, որով պայմանավորված՝ նա իրականացնում է գրեթե նույն գործառույթները, ինչ սոցիալական մանկավարժը: Առաջանում է հակասություն. մի կողմից սոցիալական մանկավարժը ուսումնառության ընթացքում պետք է հաղթահարի կրթական ծրագրի բովանդակային ընդգրկումը, մասնագիտական պրակտիկան, որ կարողանա հանրակրթական դպրոցում իրականացնել իր մասնագիտական գործունեությունը, մյուս կողմից՝ առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ ունեցող մասնագետը սոցիալական մանկավարժին համարժեք կկարողանա աշխատել հանրակրթական դպրոցում՝ իրականացնելով գրեթե նույն գործառույթները: Առաջանում է լուրջ խնդիր. վտանգի տակ է դրվում այն կրթական ծրագիրը, որն ապահովում է սոցիալական մանկավարժի որակավորումը, որով պայմանավորված՝ կնվազի նաև աշխատաշուկայում մասնագիտության պահանջարկվածությունը: Մյուս կողմից դպրոցի տնօրենը նույնպես կունենա դժվարություններ անձնակազմի կառավարման տեսանկյունից: Կարծում ենք, որ դասղեկական ինստիտուտը պետք է փոխարինել սոցիալական մանկավարժի ինստիտուտով, վերանայել ուսուցչի օգնականի հաստիքները դպրոցում այնպես, ինչպես դա արվեց բազմամասնագիտական թիմի դեպքում: Իսկ եթե պահպանվում է ուսուցչի օգնականի հաստիքը ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ, ԱՊԱ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒՄ ՊԵՏՔ Է ԱՎԵԼԱՑՆԵԼ, ՈՐ ՆԱ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ: ԵԹԵ ԱՅՍՏԵՂ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԵՆ, ԱՊԱ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՓԱՍՏԵԼ, ՈՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՑՆՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ և ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ և՛ ԴԱՍՂԵԿԻ, և՛ ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ: 2. ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱ ԽՆԱՅԵԼՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, ԻՆՉՆ ԷԼ ԿԱՊԱՀՈՎԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ., Սոցիալական մանկավարժություն, Երևան, 2017:
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ, Երևան, 2010 թ. նոյեմբերի 5:
3. Алексеевна С. А., Функции классного руководителя https://nsportal.ru/nachalnaya-shkola/materialy-mo/2014/10/06/funktsii-klassnogo-rukovoditelya.
4. Оварова Р. А., Справочная книга социального педагогика. – М., 2002.

Получено: 11.10.2022 *Received 11.10.2022*
Рассмотрено: 18.10.2022 *Reviewed 18.10.2022*
Принято: 25.10.2022 *Accepted 25.10.2022*

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License